ԱՌՑԱՆՑ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

Դանիելա Դրոբնա
Ախմեդ Աբդել-Սալամ

Saferinternet.at
Das Internet sicher nutzen!
Co-funded by the European Union
ispa Internet Service Providers Austria

Ապահով ինտերնետ

ԱՌՑԱՆՑ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

Դանիելա Դրոբնա Ախմեդ Աբդել-Սալամ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ



Առցանց կենդանաբանական այգում շատ սովորական օր է: Մեծ ու փոքր այցելուները գալիս են կենդանիներին տեսնելու և այդ գեղեցիկ օրը կենդանաբանական այգում զբոսնելու: Գալիս է նաև տնօրեն Էլզան:

Տնօրեն Էլզան ողջունում է իր կենդանաբանական այգու այցելուներին: Այսօր նրանք շատ են: Նրան ուրախացնում են հատկապես ամենակրտսեր այցելուները:

Տնօրեն Էլզան շատ հպարտ է, որ առցանց կենդանաբանական այգին սովորական կենդանաբանական այգի չէ, այլ չափազանց արտասովոր:

Առցանց կենդանաբանական այգում բոլոր բնակիչներն առցանց են:
Այստեղ կենդանիներն էլ ունեն համացանց, համակարգիչ և բջջային հեռախոսներ:

Ինչո՞ւ է կենդանաբանական այգուն համացանց հարկավոր:

Ինչո՞ւ ունեն կենդանիները համացանցի կարիք:

Պատճառները շատ են:

Համացանցը կարևոր է...
որպեսզի կենդանիները կարողանան իրար հետ կապ պահպանել:

Առյուծը միշտ կարող է զանգահարել իր ընտանիքի անդամներին, երբ նրանց կարիքն է զգում կամ կարոտում է նրանց: Առյուծ-մայրիկը կարող է հեռվից էլ նրան հիշեցնել, որ նա պետք է կանոնավոր մաքրի ատամները:

Համացանցը կարևոր է...
որպեսզի կենդանիները կարողանան սովորել:

Գորշ արջը իր համակարգչով ստուգում է եղանակը և պարզում, որ ձմեռը դեռ չի ավարտվել: Նա կարող է հանգիստ շարունակել քնել:

Համացանցը կարևոր է...
որպեսզի կենդանիները կարողանան օգնություն ստանալ:

Պինգվինը սարսափելի հարբուխ ունի և էլեկտրոնային նամակ է ուղարկում կենդանաբանական այգու բժշկուհուն:

Համացանցը կարևոր է...
որպեսզի կենդանիները
կարողանան զվարճանալ:

Նույնիսկ կենդանաբանական այգում երբեմն կարելի է ձանձրանալ:
Այդ պատճառով փիղն ուրախ է, որ կարող է գրասալիկով (պլանշետով) իր սիրելի խաղը խաղալ:

Տնօրեն Էլզան պատրաստվում է շրջայցի: Ինչպես ամեն օր, այսօր էլ նա կայցելի իր կենդանիներին: Նա մի կողմ է դնում պայուսակը և հագնում կենդանաբանական այգու իր համազգեստը: Նա պատրա՛ստ է: Հիմա կարելի է սկսել:

Կապիկների վանդակում նորից իրարանցում է:
Բոլոր կապիկները խաղում են իրար հետ ու վերուվար անում մագլցման հարմարանքների վրա: Նրանք մի ծառից մյուսն են ցատկում ու գնդակը դեսուդեն նետում:

Բայց ոչ բոլոր կապիկներն են խաղում միմյանց հետ: Կապիկ Տոտոն միայնակ նստած է մի անկյունում: Նա սևեռված նայում է իր բջջային հեռախոսին:

Տոտոն չի կարողանում հայացքը կտրել հեռախոսից և չի նկատում իր շուրջը կատարվող ոչ մի բան:

Տնօրեն Էլզան
անհանգստացած է:
Նա ողջունում է
կապիկին.
- Բարի լո՛ւյս, Տոտո՛:
Ինչո՞ւ մյուսների հետ
չես խաղում:

Տոտոն ցույց է տալիս բջջային հեռախոսը և պատասխանում.
- Խաղում եմ, չե՞ս տեսնում:
Տնօրեն Էլզան հարցնում է.
- Իսկ մյուս կապիկների հետ չե՞ս ուզում խաղալ:
Նրանք արդեն սկսել են առանց քեզ:

Երբ Տոտոն վեր է նայում, տեսնում է, որ
ընկերները միասին վազվզում են ու զվարճանում:
Հեռախոսով տարված, նա ընդհանրապես չէր
նկատել դա:



Տոտոն հասկանում է, որ իր բջջային հեռախոսը չէ ամենակարևորը:
Ընկերների հետ խաղալն է իրեն մեծագույն հաճույք պարգևում:
- Ի՛նձ նետիր գնդակը, - բացականչում է կապիկ Տոտոն ու մի կողմ դնում բջջային հեռախոսը:

Տնօրեն Էլզան ուրախ է, որ կարողացավ օգնել կապիկ Տոտոյին:

Տնօրեն Էլզան շարունակում
է ուրախ զբոսնել
կենդանաբանական այգում: Այսօր
իր այգում շատ այցելուներ կան:

Տնօրեն Էլզան ողջունում է հյուրերին
ակվարիումում: Մի փոքրիկ տղա
ձեռքով է անում գույնզգույն ձկներին: Էլզան ժպտում է,
որովհետև առանց կենդանաբանական այգում մշտապես
մի բան է տեղի ունենում:

Տնօրեն Էլզան մոտենում է պանդաների ցանկապատ տարածքին. այստեղ շատ լուռ է: Պանդա Պաուլը դժբախտ և տխուր տեսք ունի: Նույնիսկ իր սիրելի ուտելիքը՝ բամբուկը, չի ուրախացնում նրան: Ի՞նչ կարող է պատահած լինել:
- Բարև, պանդա Պա՛ուլ, ինչո՞ւ ես այսօր այդքան տխուր, - հարցնում է տնօրեն Էլզան:

Պանդա Պաուլը տխուր ողջունում է կենդանաբանական այգու տնօրենին.
- Բարի լո՛ւյս, տնօրե՛ն Էլզա: Այսօր ինձ լավ չեմ զգում: Ես չափազանց գեր եմ, այդ պատճառով էլ դժբախտ եմ:

Տնօրեն Էլզան սարսափած նայում է ու պատասխանում.
- Բայց, սիրելի Պաուլ, դա բոլորովին էլ այդպես չէ։
Ինչպե՞ս ես եկել նման խենթ մտքի։

Պանդա Պաուլը ցույց է տալիս իր համակարգիչը (նոութբուքը) տնօրեն Էլզային: Համացանցում ասվում է, որ նա չափազանց գեր է: Հարևան վանդակից տնօրեն Էլզան բարձրաձայն չարամիտ ծիծաղ է լսում:

Հարևանությամբ ապրող բորենիները չարախոսություններ են գրում պանդա Պաուլի մասին:
Բոլոր մյուս կենդանիները ևս կարող են կարդալ այդ ամենը համացանցում: Այդ պատճառով է Պաուլը տխուր:



Տնօրեն Էլզան մխիթարում է պանդային ու ասում.
- Սիրելի՛ Պաուլ, կարիք չկա նեղվելու, որովհետև սա ուղղակի չար կատակ է: Դու չպետք է հավատաս համացանցի չարախոսություններին, քանի որ դրանք ճիշտ չեն: Ես հենց հիմա կհանդիպեմ բորենիներին

ու կխոսեմ նրանց հետ:
Պաուլ պանդան իրեն թեթևացած է զգում, վերցնում է իր բամբուկը, որպեսզի վերջապես քաղցը հագեցնի: Տնօրեն Էլզան լուրջ դեմքով գնում է դեպի բորենիների վանդակը: Ա՛խ, այդ բորենիները: Միշտ մի չարաճճիություն են անում:

Տնօրեն Էլզան հասնում է բորենիների մոտ այն պահին, երբ բոլորը հավաքված են նոութբուքի շուրջ ու ծիծաղում են: Գուցե հաջորդ կատա՞կն են ծրագրում առցանց տարածելու համար: Բորենիներն անմիջապես հասկանում են, թե ինչու է տնօրենը եկել: Էլզան ողջունում է նրանց.



- Բարի օր բոլոր բորենիներին: Ես եկել եմ, որ ձեզ հարցնեմ, թե ինչո՞ւ եք ստոր բաներ գրում պանդայի մասին:
Բորենիները բռնվել են վատ արարքի վրա:

Տնօրենը բացատրում է նրանց, որ չի կարելի համացանցում ստոր և սուտ բաներ գրել մյուսների մասին: Նա ասում է.

- Պաուլ պանդան շատ տխուր էր. նա հավատացել էր, որ ինքն իսկապես գեր է: Ավելին, այդ ամենն այլ կենդանիներ էլ կարող են տեսնել: Բորենիներից մեկը պատասխանում է տնօրենին.

- Մենք չգիտեինք, որ Պաուլը այդ ամենին կհավատա: Մենք պարզապես զվարճանում էինք: Չէինք մտածել, որ այլ կենդանիներն էլ կկարդան:



Բորենիները ամոթից հայացքները հառում են հատակին: Նրանք հասկանում են իրենց սխալը և շատ են ամաչում իրենց արածի համար:

Նրանք հասկանում են, որ իրենց չար կատակները պանդայի համար զվարճալի չէին, և ջնջում են դրանք համացանցից: Նրանք խոստանում են նաև, որ այլևս երբեք նման բան չեն անի:

Տնօրենն ուրախ է, որ կարողացավ օգնել պանդա Պաուլին ու բորենիներին: Նա գոհունակությամբ շարունակում է քայլել կենդանաբանական այգով: Կենգուրուների մոտ այսօր հանգիստ է:

Տնօրեն Էլզան կանգ է առնում այծքաղների մոտ:
- Բարև բոլորին, - ողջունում է նա,
- շատ զբաղված տեսք ունեք: Ի՞նչ եք անում:
Մամա Անելիզեն նոր գրադարակ է կառուցում:

Փոքրիկ այծքաղներ Լաուրան և Լուկասը շփվում են համակարգչով: Բայց ում հետ են զրուցում:
- Խոսում ենք մեր կենդանաբանական այգու մեկ այլ այծքաղի հետ, - ասում է Լաուրան:

Էկրանին իրոք այծքաղ է: Տնօրեն Էլզան զարմանում է:
Կենդանաբանական այգում այլ այծքաղներ չկան: Այդ դեպքում
ո՞ւմ հետ են Լաուրան ու Լուկասը զրուցում համացանցում:

Տնօրեն Էլզան գլխի է ընկնում, թե ինչ է կատարվում:
Լաուրան ու Լուկասը համացանցում ամենևին էլ այծքաղի
հետ չեն խոսում, այլ ուրիշ ինչ-որ մեկի հետ: Լուիս առյուծն է
ներկայացել իբրև այծքաղ:

Այժմ Լաուրան ու Լուկասը նույնպես հասկանում են հնարքը: Լուիս առյուծը համացանցում իր իրական դեմքը թաքցնելով, այծքաղի տեսքով տիկնիկ է օգտագործել:



Երբ այս նենգ հնարքը բացահայտված էր, առյուծը ցույց է տալիս իր դեմքը:

Այժմ նա տնօրեն էլզայի ու այծքաղների առջև միանգամայն ամոթահար ու շփոթված տեսք ունի:

Այծքաղ Անելիզեն վրդովված փնչում է: Նա այնքան բարկացած է, որ քիչ է մնում՝ ականջներից ծուխ դուրս գա:
- Ինչո՞ւ էիր այծքաղ ձևանում: Ուզում էիր Լաուրային և Լուկասին գայթակղել և խժռե՞լ:



Առյուծ Լուիսը անհանգիստ շարժվում ու ծռմռվում է: Նա ուզում է խուսափել պատասխանից:
Բայց այծքաղ Անելիզեն չի զիջում: Վերջապես առյուծը ամաչելով խոստովանում է.
- Այո՛, որսի բնազդն էր ինձ համակել:
Այծքաղ Անելիզեն սարսափած է, բայց մինչ նա որևէ բան կասի, առյուծ Լուիսը ներողություն է խնդրում:
- Ճիշտ չեմ արել, որ ուրիշի անունով եմ ներկայացել, կներե՞ք ինձ:
Այծքաղ Անելիզեն ուրախ գլխով է անում, քանի որ առյուծը խելքի է եկել:
Բայց միևնույն ժամանակ դիմում է իր երեխաներին.
- Դուք պետք է, միևնույնն է, զգոն մնաք, անգամ՝ համացանցում:

Տնօրեն Էլզան դիմում է Լաուրային ու Լուկասին.
- Համացանցում կենդանիներն երբեմն կարող են որպես այլ կենդանիներ ներկայանալ: Այդ պատճառով դուք պետք է զգոն լինեք:
Կենդանաբանական այգու տնօրենը այծքաղի ձագուկներին խրատներ է տալիս, թե ինչպես ապագայում նորից առյուծի ճանկը չընկնեն.
- Եթե ինչ-որ մեկը ձեզ հաճոյախոսություններ է անում կամ նույնիսկ գայթակղում է նվերներով, պետք է հատկապես զգուշավոր լինեք: Դա կարող է նշան լինել, որ ինչ-որ մեկը փորձում է խաբել ձեզ:
Լաուրան և Լուկասը գլխով համաձայնության նշան են անում:

- Ու մի բան էլ, - ասում է տնօրեն Էլզան, - եթե ինչ-որ մեկը ձեզ հարցնի՝արդյոք տանը մենակ եք, դուք պետք է զգուշանաք: Նույնը, երբ ձեր հասցեի կամ հեռախոսահամարի մասին հարցեր են տալիս: Նման հարցերի դեպքում ավելի լավ է ավարտել զրույցը և անմիջապես պատմել մայրիկ այծքաղին:



Փոքրիկ այծքաղները ուշադիր լսում են: Նրանք խոստանում են, որ ապագայում ավելի ուշադիր կլինեն համացանցում: Առյուծն էլ է խոստանում ուղղվել: Տնօրեն Էլզան գոհ է, որ կարողացավ օգնել ինչպես այծքաղներին, այնպես էլ առյուծին:



Տնօրեն Էլզան հայացք է նետում ընձուղտի վանդակին: Ընձուղտ Գրետան կանգնած է ցանկապատի մոտ և առանձնակի երջանիկ տեսք ունի: Բայց ինչ է իրականում տեղի ունենում ընձուղտների վանդակում:

Առաքիչն է եկել և փոստից
բազմաթիվ փաթեթներ բերել։

Տնօրեն Էլզան նայում է մեծաքանակ առաքումներին ու
նայում վերև՝ ընձուղտ Գրետային.
- Սիրելի՛ Գրետա, ինչ է կատարվում այստեղ։
Գրետան պատասխանում է.
- Սրանք նվերներ են, ինձ համար նվերներ։
Տնօրեն Էլզան զարմացած տեսք ունի։
Ընձուղտ Գրետայի տարեդարձը
հաջորդ ամիս է, ինչպե՞ս կարող էր
արդեն նվերներ ստանալ։

- Տես,- ասում է ընձուղտ Գրետան,- նվերները հավելվածի միջոցով եմ ստացել:



- Իմ գրասալիկի այս խաղային հավելվածում կա «Ստացի՛ր քո փափուկ խաղալիքները» կոճակը, ու ես սեղմեցի այն: Այդ պատճառով հիմա այսքան շատ նվերներ եմ ստանում, - բացատրում է Գրետան:

- Օ~, ոչ, սիրելի՛ Գրետա, - ասում է տնօրեն Էլզան, - սրանք նվերներ չեն, այս փափուկ խաղալիքները դու գնել ես: Գրետայի հավատը չի գալիս: Զարմանքից նա աչքերը չռում է.

- Ո՛չ, ոչ, ոչ, ես ոչինչ չեմ գնել, - ասում է նա, բայց ձայնը հանկարծ անվստահ է հնչում:

- Ցավոք, այդպես է, - բացատրում է տնօրեն Էլզան, - ինչպես իրական կյանքում, այնպես էլ համացանցում հենց այնպես նվերներ չեն լինում: Կոճակը, որին դու սեղմել էիր, գնումների կոճակ էր:





Տնօրեն Էլզան հետ է ուղարկում առաքիչին իր բազմաթիվ ծանրոցներով: Նա առաքիչին բացատրում է, որ ընձուղտ Գրետան սխալվել է, նա տեղյակ չէր, որ փափուկ խաղալիքներ է գնում:

Բացի այդ, Գրետան մոռացել էր նախապես ծնողներին հարցնել: Առանց մայրիկ ընձուղտի և հայրիկ ընձուղտի թույլտվության նա չպետք է փափուկ խաղալիքներ գնի:

Էլզան ընձուղտ Գրետային բացատրում է, թե ինչպես է պետք ավելի զգոն լինել:
- Հատկապես խաղերում հաճախ կոճակներ են ներկառուցված, որոնք խաղալիքներ կամ այլ բաներ են խոստանում. դու պետք է հատկապես զգույշ լինես:
Տնօրեն Էլզան շոյում է Գրետայի այտը:
- Ինչպես իրական կենդանաբանական այգիներում, այնպես էլ համացանցում սովորաբար ոչինչ անվճար չէ:

Բայց դա չի նշանակում, որ դու այլևս չես կարող խաղալ, պարզապես ապագայում ավելի զգույշ եղիր:

Տնօրեն Էլզան շարունակում է ճանապարհը: Կենդանաբանական այգով իր շրջայցը գրեթե ավարտված է: Վերջում նա այցելում է պինգվիններին: Իրենց տարածքում նրանք մեծ լողավազան ունեն՝ բազմաթիվ սառցաբեկորներով:

Բոլոր պինգվիններն ուրախ խաղում են, միասին լողում լողավազանում կամ սառցաբեկորներից ցատկում ջուրը: Միայն մի պինգվին է առանձին կանգնած:
- Ինչո՞վ է զբաղված, - ինքն իրեն հարցնում է տնօրեն Էլզան:



Պինգվին Պաղպաղիկը կանգնած է քարի հետևում և չի խաղում մյուս պինգվինների հետ: Նա հանել է ֆրակը և կանգնած է միայն լողազգեստով, իսկ նրա բջջային հեռախոսը շարունակ լուսարձակում է:



Տնօրեն Էլզան կանգում է Պաղպաղիկի դիմաց և ողջունում նրան:
- Բարև, Պաղպաղիկ, ինչ ես անում այստեղ բոլորովին մենակ:
Պաղպաղիկը թևով ողջունում է նրան.
- Բարև, տնօրեն Է՛լզա, - ասում է նա, - ինքս ինձ լուսանկարում եմ:
Տնօրեն Էլզան շփոթված է: Նա նայում է լվացքի պարանին և հարցնում.
- Բայց ինչո՞ւ ես հանել քո ֆրակը:



Պաղպաղիկը
լրջանում է:
- Ես հանել էի ֆրակս,
որովհետև ուզում էի
լուսանկարել իմ նոր
լողազգեստը: Ուզում եմ
լուսանկարն ուղարկել
մյուս պինգվիններին:

Տնօրեն Էլզան ցնցված է.
- Բայց, Պաղպաղիկ, դու չես կարող լողազգեստով քո լուսանկարը
ուղարկել մյուս կենդանիներին:



Պաղպաղիկը կարմրում է: Նա չէր
սպասում, որ տնօրեն Էլզային դուր չի գա
իր մտահղացումը: Միևնույն ժամանակ նա
շփոթված է.
- Ինչու՞ չես հավանում իմ գաղափարը, -
հարցնում է նա՝ հանկարծակի ամաչելով:
Տնօրեն Էլզան բացատրում է
նրան լուսանկարների հետ
կապված խնդիրը:

- Դու չպետք է լողազգեստով լուսանկարներ ուղարկես համացանցով:
Երբեք չգիտես, թե որտեղ կհայտնվի քո լուսանկարը:



Պաղպաղիկը պատասխանում է.
- Ես պարզապես ուզում էի լուսանկարը մյուս պինգվիններին ուղարկել:
Տնօրեն Էլզան ըմբռնումով ժպտում է.
- Լուսանկարը կարող է արագ հայտնվել այլ տեղ, դա ավելի հեշտ է, քան դու կարծում ես: Բավական է միայն, որ մեկ այլ կենդանի ուղարկի լուսանկարը բորենիներին, և նրանք կարող են այն չար կատակների համար օգտագործել: Կամ այն կարող է բոլորովին օտար կենդանի տեսնել, ում համար լուսանկարը նախատեսված չէր:
Այժմ պինգվին Պաղպաղիկը հասկացավ.
- Համացանցը մեծ է, և ես չեմ կարող իմանալ, թե ինչ կարող են անել մյուս կենդանիները: Ճիշտ է:
Տնօրեն Էլզան գլխով հավանության նշան է տալիս:
- Ճիշտ է, - Էլզան աչքով է անում նրան:

Պինգվիններին այցելելուց հետո տնօրեն Էլզան նստում է նստարանին:
Նա հոգնեց երկար քայլելուց: Այսօր այնքա՛ն շատ կենդանիների այցելեց:

Առցանց կենդանաբանական այգին արտասովոր կենդանաբանական այգի է, սակայն համացանցի, բջջային հեռախոսների և համակարգիչների հետ կապված միշտ խնդիրներ են լինում: «Ամենակարևորն այն է, որ բոլոր կենդանիները համացանցից գրագետ օգտվելու վերաբերյալ օգնություն ստանան», - գոհունակությամբ մտածում է նա:

Տնօրեն Էլզան հետևում է, թե ինչպես են հեռանում վերջին այցելուները: Ինչպիսին է լինելու վաղվա օրն առցանց կենդանաբանական այգում: Նա ժպտում է: Անշուշտ, բազում անակնկալներով և արկածներով:

Վերջ

Ախմեդ Աբդել-Սալամ՝ սցենարիստ, ռեժիսոր և դերասան

Ախմեդ Աբդել-Սալամը ծնվել է Վիեննայում՝ 1983 թվականին, և դեռ մանկության տարիներից հայտնաբերել է պատմություններ պատմելու իր տաղանդն ու մղումը: Իր իսկ սցենարների հիման վրա նկարահանած նյութերի արդյունքում նա 2010 թվականին ընդունվել է Վիեննայի կինոակադեմիա, որտեղ սովորել է «Գրքեր և դրամատուրգիա» մագիստրատուրայի բաժնում:
2013 թվականին նա արժանացել է Կարլ Մայերի մրցանակին, իսկ 2014 թվականին՝ ստացել «LiterarMechana» տարեկան կրթաթոշակը: 2017 թվականին նրան շնորհվել է Տոկիոյի հիմնադրամի «Երիտասարդ առաջնորդների» կրթաթոշակը:

Դանիելա Դրոբնա՝ բանասիրության մագիստրոս

Դանիելա Դրոբնան ծնվել է Բրատիսլավայում՝ 1988 թվականին, և 1991 թվականից բնակվում է Վիեննայում: Վիեննայի համալսարանում նա սովորել է գերմանագիտություն և հաղորդակցական գիտություններ՝ մեդիա գրագիտություն և թվային մեդիա ուղղվածությամբ: Նրա գրական գործունեությունն արժանացել է մի շարք կրթաթոշակների և գրական մրցանակների, օրինակ՝ իր առաջին վեպի համար ստացել է մշակույթի նախարարության գրական կրթաթոշակը:
Վերջին մրցանակներից են դաշնային կանցլերի կողմից տրված Միրա Լոբեի անվան կրթաթոշակը մանկական և պատանեական գրականության համար և սցենարի մրցանակը Ավստրիական սցենարների ֆորումի կողմից: 2018 թվականից Դանիելան դասավանդում է Կիրառական արվեստի համալսարանի լեզվական արվեստի ինստիտուտում: 2018 թվականին «Piper» հրատարակչությունը լույս է ընծայել նրա նոր՝ «Երբ եկեղեցին անցավ գետը» վեպը: Նա երկար տարիներ աշխատում է SS ոլորտում: www.dididrobna.com

Ծանոթագրություն

Առցանց կենդանաբանական այգի
Հեղինակ՝ Դանիելա Դրոբնա
Նկարազարդող՝ Ախմեդ Աբդել-Սալամ
Նյութի սեփականատեր և հրատարակիչ՝ ISPA - Ինտերնետ ծառայությունների մատակարարներ, Ավստրիա
Ավստրիական ինտերնետ-մատակարարների ասոցիացիա
Վերինգեր փողոց 3/18 1090
Առաջին հրատարակություն, Վիեննա 2022
ISB-Number: 978-3-9505335-2-1





Ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից՝ «Ապահով համացանց» ծրագիր
www.ispa.at/onlinezoo

Այս գիրքը հայերեն թարգմանվել է Եվրոպական միության աջակցությամբ:
Գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը Հայաստանում նախաձեռնել է «Հանրային լրագրության ակումբ» ՀԿ-ն, 2024 թ.-ին:
Հայերեն թարգմանության հեղինակային իրավունքը պատկանում է Հանրային լրագրության ակումբին և Եվրոպական միությանը:
Գիրքը նախատեսված չէ վաճառքի համար:
Թարգմանիչներ՝ Ստելլա Սահակյան, Մարիաննա Դիլաքյան:
Խմբագիրներ՝ Սեդա Մուրադյան, Մարիա Սադոյան:
Թարգմանության վրա նաև աշխատել են Շուշան Շատիկյանն ու Նունիկ Ավետիսյանը:

Co-funded by the European Union

PUBLIC JOURNALISM CLUB

ISPA - Ինտերնետ ծառայությունների մատակարարներ, Ավստրիա

Որպես ինտերնետ արդյունաբերության հովանոցային կազմակերպություն՝ ISPA-ն ներկայացնում է համացանցի ոլորտի ավելի քան 220 անդամների և 1997 թվականից աշխատում է Ավստրիայում համացանցի խթանման ուղղությամբ: ISPA-ն համացանցի օգտագործումը դիտարկում է որպես կարևոր մշակութային տեխնոլոգիա և ստանձնում է դրանից բխող սոցիալ-քաղաքական պատասխանատվությունը, օրինակ՝ հիմնելով «Stopline»-ը, որը հնարավորություն է տալիս հաղորդել համացանցում անչափահասների նկատմամբ բռնության տարածման և նացիոնալ-սոցիալիստների նոր ակտիվությունների մասին: Եվրահանձնաժողովի «Ապահով համացանց» ծրագրի շրջանակներում այն մշակում է բազմաթիվ տեղեկատվական նյութեր՝ երեխաների և երիտասարդների մեդիագրագիտությունը խթանելու և համացանցի անվտանգ ու պատասխանատու օգտագործման նպատակով իրազեկում իրականացնելու համար:

ISPA-ի բոլոր անվճար ուղեցույցները հասանելի են www.ispa.at/broschueren կայքում:
Համացանցից անվտանգ օգտագործման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները հասանելի են www.saferinternet.at կայքում:

Saferinternet.at
Das Internet sicher nutzen!

Co-funded by the European Union

Ապահով ինտերնետ

Առցանց կենդանաբանական այգին սովորական կենդանաբանական այգի չէ:

Այս առցանց կենդանաբանական այգում ոչ միայն տնօրեն Էլզան, այլև նրա հովանավորության տակ գտնվող կենդանիներն են առցանց: Սմարթֆոնները, պլանշետները և նոութբուքները կենդանաբանական այգու կյանքի առօրյայի մի մասն են:

Իր ամենօրյա շրջայցերի ժամանակ տնօրեն Էլզան հայտնաբերում է, որ համացանցը և բազմաթիվ սարքեր երբեմն խնդիրներ են առաջացնում: Արդյո՞ք նա կկարողանա օգնել բոլոր կենդանիներին:

Գիրքը հասանելի է նաև էլեկտրոնային տարբերակով՝
www.ispa.at/onlinezoo

ISBN 978-3-9505335-2-1